Ն. ԳԱՐՈՆ

ԹՈՄԻԿՆ ՈՒ ԺՈՒՉԿԱՆ

Ն. ԳԱՐԻՆ

891.71-93
Գ-

ԹՈՄԻԿՆ ՈՒ ԺՈՒՉԿԱՆ

A 3973
1382

Թարգմ. ՎԱՐԴ-ԳԱՄՍԱՐ
Նկարները՝ Ս. ՉԱԿՐԺԵՎՍԿՍՑԱՑԻ

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ 1937

ՍՍՌՄ-ԳԱՄ Է 1961 Թ.

Փոքրիկ Թոմիկն հավասարում ընկերը՝ Ժուչկան կորավ։ Թոմիկը նայեց Ժուչկի սիրելի բոլոր անկյունները, գնեց ամբողջ բակը, Ժուչկան վոչ մի տեղ չկար։ Ամբողջ որը բակում լսվում եր Թոմիկի բարակ ձայնը։ «Ժուչկա, Ժուչկա, առ, առ, առ, թյու, թյու, թյու»։ Բայց բոլորն լռեցին։ Ժուչկան չեր պատասխանում։

Գիշերը վրա հասավ։ Թոմիկը պառկեց իր անկողնում, բայց վոչ մի կերպ չեր կարողանում քնել, միշտ մտածում եր Ժուչկի մասին։ Այն միտքը, թե նա չի տեսնի իր խուճուճ Ժուչկային, այլևս չի տեսնի, թե ինչպես նա իր յերևալուն պես կսկսի տխուր ֆնգֆնգալ ու փորի վրա սողալով մոտենալ

իրեն, վոր զուցե նա այլևս կենդանի չէ, Թոմիկի սիրտը լցրել եր հուսահատությամբ, և նա չեր կարողանում քնել։

—Դայակ, վո՞ւրտեղ է Ժուչկան,—հարցնում եր Թոմիկը։ Դայակը քնում եր նույն սենյակում։

—Ի՜հ,—պատասխանում եր դայակը,—Ժուչկային մեր հին ջրհորն է ձգել մի ինչ վոր խելագար։—Յեվ մի քիչ լռելով, ավելացնում եր.—Գոնե առաջուց ասաներ, թե չէ, հենց կենդանի... Ասում են սրտամեռն ամբողջ որն կլանչում եր։

Թոմիկը պարզ պատկերացնում եր իրենց այգու անկյունի հին, մոռացված ջրհորը, վոր վաղուց աղբակույտի տեղ եր դարձվել, նրա սոթիկ հեղուկե հատակը, վորը հաճախ ընկերների հետ լուսավորում էյին, ձգելով այնտեղ վառած թղթի կտոր։

—Ո՞վ ձգեց, հարցնում է Թոմիկը։

Ո՞վ գիտե։ Մի՞թե կիմանաս։

Թոմիկը սարսափահար լսում է դայակի խոսքերը։ Նրա գլխում բազմաթիվ մտքեր են կուտակվում, անթիվ ծրագրեր են ծնվում և անհետանում, թե ինչպես փրկել Ժուչկային, նա մի անիրագործելի ծրագրից անցնում է մյուսին և աննկատելի կերպով քունը

տանում է։ Քնի կեսին նա մի ինչ վոր հար-
վածից զարթնում է այն ժամանակ, յերբ
նա Ժուչկային գուրս եր քաշում Ջրհորից
մի ինչ վոր ոդակով։ Ժուչկան միշտ կտրվում
եր, դրա համար եվ նա վճռեց անձամբ

մանել ջրհորը։ Թոմիկը պարզ հիշում է, թե ինչպես նա թոկը կապեց սյունից և թե ինչպես, բռնելով այդ թոկից, սկսեց զգուշությամբ իջնել ներքև։ Նա արդեն հասավ կեսին, յերբ նրա վոտքերը հանկարծ սայթաքվեցին, և նա գլխկոնձի ընկավ հոտած ջրհորի հատակին։ Նա զարթնեց այդ վայր ընկնելուց և նորից ցնցվեց, յերբ հիշեց վայր ընկնելու պատկերը։

Լուսամուտի փեղկից բացվող լուսապեմը ագոտ լույս եր արձակել։

Թոմիկն ամբողջ մարմնի մեջ զգում եր մի ինչ վոր թուլություն, բայց և այնպես վորոշեց անմիջապես իրագործել յերազի առաջին մասը։ Նա սկսեց արագ հագնվել, հետո գնաց դայակի անկողնու մոտ, հատակից բարձրացրեց լուցկու տուփը, մի բուռը լուցկի լցրեց գրպանը, վոտքի մատների ծայրերի վրա անցավ մանկանոցը և մտավ սեղանատուն։ Այստեղ արդեն բավական լույս եր։

Թոմիկը մատների ծայրերի վրա մոտեցավ ապակե դռանը և մեղմ, վորպեսզի աղմուկ չլինի, պատեց բանալին, սեղմեց բռնակը և դուրս յեկավ պատշգամբ։

Նա պատշգամբի սանդուխների աստի-

ճանապարհով իջավ այգին, մտավ սրահատունն, այնտեղից վերցրեց սանձ, թոկ և լապտեր։

Թոմիկը պետք է անցներ ցանկապատի վրայով, վորպեսզի ընկներ հին այգին, վորտեղ գտնվում էր Ջրհորը։ Նա մագլցելու վարպետ էր։ Նա իրեն փաթաթեց թոկով և սանձով, առանձերով բռնեց լապտերը և արագ անցավ ցանկապատի վրայով։

Յեվ ահա նա տեսավ խիտ խոտերի մեջ մոռացված, հին Ջրհորը։ Թոմիկը մոտ վազեց Ջրհորի բերանին և կիսաձայն կանչեց.

— Ժռուշկա, Ժռուշկա։

Թոմիկը շունչը պահած սպասում էր պատասխանի։

Սկզբում նա բացի սեփական սրտի բաբախումից և էր պլսին խփած մուրճի հարվածներից վոչինչ չէր լսում։ Բայց ահա

մի ինչ վոր հեռու տեղից նրա ականջին հասավ տխուր յերկար տնքոց։ Այդ տնքոցից Թոմիկի սիրտը ճմլվեց, և նա բարձր կանչեց.

—Ժուչկա, Ժուչկա։

Այս անգամ Ժուչկան ճանաչեց իր տիրոջ ձայնը և ուրախ կլանչեց։

Թոմիկը լաց յեղավ, վոր Ժուչկան իրեն ճանաչեց։

—Սիրելի Ժուչկա, սիրելի Ժուչկա, յես այս բոպեյիս քեզ կհանեմ, զոչում եր նա, կարծես թե Ժուչկան հասկանում եր Թոմիկին։

Ժուչկան պատասխանեց նոր ուրախալի կլանչոցով։

—Այս բոպեյիս Ժուչկա, այս բոպեյիս, բացականչեց Թոմիկը և սկսեց իրագործել իր յերազը։

Թոմիկն իրեն զգաց առուլյգ, ուժեղ։ Նա ջրհորի բերանին գրեց մի շեղաձև ձող, նրանից կապեց թոկ, իսկ սրանից եկ լապտերը, վառեց նրա միջի մոմը և սկսեց լապտերն իջեցնել ջրհորի մեջ։ Լապտերը լուսավորեց ջրհորի ներսը։

Թոմիկի առաջ, խավարի անհուն խորության մեջ, յերևացին մոռացված ջրհորի

անշարժ, կարծես ապակե, հատած մակերեսը և բոլոր պատերը, որ ծածկված էին մի ինչ որ գորշ լոյսով։ Շնչակտուր նա նկատեց մի անկյունում սև շարժուն կետ և հազիվ ճանաչեց, ավելի շուտ, դուշակեց, որ դա իրեն յերբեմնի ուրախ և ժիր Ժուշկան է ու այժմ հազիվ է կանգնած մնում Ջրհորի դուրս ցցված քի վրա։ Ժամանակ չեր կարելի կորցնել։ Վախից, կարող է արդյոք Ժուշկան դիմանալ, մինչև նա ամեն բան կպատրաստի, Թոմիկի ուժերը կրկնապատկվեցին։ Նա արագ հանեց լապտերը, իսկ վորպեսզի Ժուշկան, նորից ընկնելով մթության մեջ, չկարծեր, որ նրան թողեց, Թոմիկն ամբողջ ժամանակ նախապատրաստվելիս կանչում եր.

—Ժուշկա, Ժուշկա։ Յես այստեղ եմ։

Յեվ ուրախանում եր, որ Ժուշկան պատասխանում եր նուլնպիսի ուրախ վոռնոցով։ Վերջապես ամեն ինչ պատրաստ եր։ Սանձերի ոգնությամբ լապտերը և ծուռը խաչաձևած յերկու ձողը, որի վրա դրված եր ոտակ, ուղեցին կամաց իջնել Ջրհորի մեջ։

Բայց Ժուշկան ամեն բան փչացրեց։ Նա փորձ արեց թռթռով բռնելու իջնող սար-

քից։ Այդ դիպչելը բավական եր, վոր-պեսզի ոդն իդուր տեղը դուրս պրծներ, իսկ Ժուչկան, կորցնելով հավասարակշռու-թյունը, ընկավ ցեխի մեջ։

Նա սկսեց թրպրտալ ցեխի մեջ, հուսա-հատ վոռնալ և զուր տեղը փնտռել բաց թողած ցցվածքը։

Թոմիկը վախեց Ժուչկայի փոխարեն և մտածեց, վոր ինքը կործանեց իր սիրեցյա-լին։ Ու նա վճռեց անձամբ մտնել ջրհորի մեջ։

Նա սանձը կապեց հենարաններից մե-կին, վոր պահում եյին շեղափայտը, և մտավ ջրհորի մեջ։ Նա գիտակցում եր միայն մի բան, վոր մի վայրկյան անգամ ժամանակ չի կարելի կորցնել։

Նրա քթին փչեց զզվելի գարշահոտու-թյուն։ Մի վայրկյան նա վախ ե զգում, վոր կարող ե իր շունչը կտրվել, բայց վերհի-շում ե, վոր Ժուչկան այնտեղ մնացել ե մի ամբողջ որ։ Այդ նրան հանգստացրեց և նա շարունակեց իջնել ավելի խոր։ Նա վոտքով զգուշությամբ շոշափում ե նոր հենարան և, գտնելով այն, սկզբում փորձում ե, ապա ամուր հենվում ե նրա վրա և իջեցնում մյուս վոտքը։ Հասնելով այնտեղ, վորտեղ

մնացել էին ձողը և լապտերը, նա ամրացնում է լապտերը, բաց է անում սանձի ծայրը և ավելի խոր է իջնում։ Գարշահոտությունն այնուամենայնիվ դզալի յե դառնում և նորից անհանգստացնում ու վախեցնում է նրան։ Թոմիկն սկսում է շընչալ բերանով։ Հրաշալի արդյունք է ստացվում. վատ հոտ չկա, վախը վերջնականապես կորչում է։

Իզուր ժամանակ չպետք է կորցնել։ Թոմիկը զգուշությամբ, բռնելով ատամներով կեղտոտած սանձը, նրա ազատ ծայրով կապկպում է Ժուչկին, հետո սկսում է մաղլցել դեպի վեր։ Ժուչկան հուսահատ վոռնոց է բարձրացնում, բայց այդ վոռնոցն Թոմիկին ստիպում է ավելի արագ բարձրանալ։

Սակայն բարձրանալն ավելի դժվար եր քան իջնելը։ Հարկավոր է ոդ, հարկավոր է ույժ, բայց թե մեկը և թե մյուսը Թոմիկին պակասում են։ Նա ջղայնաբար բոլոր թոքերով կլանում է ջրհորի ոդը, սլանում է դեպի վեր և ինչքան ավելի յե շտապում, այնքան շուտ է ուժասպառ լինում։

Թոմիկը բարձրացնում է գլուխը, նա-

յուամ և վերև, հեռավոր կապույտ յերկնքին, իրանից շատ բարձր տեսնում է փոքրիկ ուրախ թռչնակի և նրա սիրտը ճնշվում է կարոտից. նա զգում է, որ չի կարող այդ-տեղից դուրս սողալ։ Նա վախենում է։ Նա շփոթված կանգ է առնում, չիմանալով ինչ անել. գառն, ցից լինել, թե մորը կանչել։

— Չպետք է վախենալ, չպետք է վախենալ, — ասում է նա, դողդողջուն ձայնով։ Ամոթ է վախենալ։ Յերիչոտներն են վախենում միայն։ Ով վատ բան է անում, նա վախենում է, իսկ յես վատ բան չեմ անում. յես Ժուչկային եմ հանում, մայրիկն ու հայրիկը դրա համար ինձ կդովեն։ Հայրիկս պատերազմումն է յեղել և վոչ մի բանից չի վախեցել։ Յես իղուր եմ վախենում։ Այստեղ վախենալու բան չկա։ Ահա կհանգստանամ և կմագլցեմ ավելի վեր, հետո ելի կըբարձրանամ դեպի վեր և, այդպիսով դուրս կգամ Ջրհորից, հետո ել կհանեմ Ժուչկային։ Ժուչկան կուրախանա, բոլորը կզարմանան, թե յես ինչպես եմ դուրս հանել Ժուչկային։

Թոմիկը խոսում է բարձր, նրա ձայնն ամրանում է, լսվում է ավելի յեռանդով ու պինդ և, վերջապես, հանգստանալով, նա շարունակում է մագլցել դեպի վեր։

Յերբ նա նորից զգում է, վոր կրկին անգամ սկսվում է հոգնել, դարձյալ ինքն իրեն բարձրաձայն խոսում է։

— Այժմ նորից կհանգստանամ, հետո կբարձրանամ վերև։ Իսկ յերբ դուրս կգամ, կպատմեմ, թե ինչպես ինքս ինձ վրա գտնում

եյի ծիծաղելիորեն, բոլորը կծիծաղեն, յես էլ կծիծաղեմ։

Թոմիկը ժպտում է։ Վերջապես, նրա գլուխը յերևում է Ջրհորի բերանի վերջին կարվածքից։ Նա գործադրում է մի վերջին ճիգ, ինքը դուրս է գալիս և հանում է նաև Ժուչկային։

Այժմ, յերբ գործն ավարտված է, նա սկսում է ուժասպառ լինել։ Իրեն ղգալով ամուր գետնի վրա, Ժուչկան թափահարում է մարմինը, հետո խելացնոր ընկնում է Թոմիկի կրծքի վրա և սկսում է լիզել նրա հենց շրթունքներից։

Բայց այդ դեռ քիչ է, շատ քիչ, վորպեսզի արտահայտե իր ուրախությունը, նա նորից դես ու դեն է նետվում։ Նա ընկնում է մի լինչ վոր խելացնոր կատաղության մեջ։

Թոմիկը ձեռքերով պաշտպանվում է նրանից, յերեսը շուռ է տալիս և մեջքը դեմ անում նրան, հուսալով այդ յեղանակով ազատել թեկուզ իր յերեսը կպչուն, հոտած ցեխից։ Թոմիկը վոչինչ չի նկատում, բայց հանկարծ նա քարանում է տեղում։ Նա տեսնում է, թե ինչպես պատի յետևից կամաց բարձրանում է մի լինչ վոր մարդու գլուխ։

Թոմիկը բարձր գոռում է և վայր ընկ-



A 3973

նում, մեծ ուրախություն պատճառելով ժուչկային, որն այժմ ազատ, առանց արգելքների արտահայտում էր նրան իր ներսի սիրտը։

Գերեզմանների կողմից իջնում է Յերեմեյն՝ տան աշխատողը. նա պատի մյուս կողմը խոտ էր քաղում։ Յերեմեյն լսեց Թոմիկի բացականչությունը, մոտեցավ, որ յե-

ՀԱՅԿ ԳՐՏԻՐԵՄԻՐՇԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿՍԱՅԵՄՈՒ

ըեխայի հետ մի ինչ վոր վատ բան և պատահել, և շտապեց նրան ոգնություն։

Յերեմեյն հասկացավ, թե բանն ինչումն և։ Նա զգուշությամբ Թոմիկին վերցրեց իր ուժեղ ձեռքերի վրա և Ժուչկայի ուղեկցությամբ, վորը չեր դադարում ուրախ հաչալուց, Թոմիկին տարավ տուն։

Մի ժամից հետո Թոմիկն իրեն լավ զգաց. պուխն այլևս չեր ցավում և նա պատմեց, թե ինչպես ազատեց Ժուչկային։

ՀԱՍՈ ԳԻՏԼԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱՐԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

Գլխ. խմբագիր՝ Գ. Ղազարյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Ցրբաշխիչ՝ Թ. Հովակիմյան

Գլավլիտի լիազոր՝ Կ. 4701 Հրատ. 4225
Գրավիր 1105 Տիրաժ 400 օ.
Թուղթ 74×110. Տպագր. 1/4 մամ.
Մեկ մամ. 39960 նիշ. Հեղինակային 1/2 մամ.
Հանձնված է արտադրության 17 օգոստոսի 1937
Ստորագրված է տպագրության 8 դեկտեմբերի 1937
Գինը 50 կոպ.

Պետհրատի տպարան, Յերևան, Լենինի փող. 65

8023

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038811

А I/3973

Н. ГАРИН

ТЕМА и ЖУЧКА

ГИЗ АРМ. ССР. ЕРЕВАН

Прош. 1940 г.